



«Նոր ժամանակի կրթություն»

ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱ

Ն

ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների

իրականացումը «Աշխարհագրություն» առարկայի

դասավանդման ընթացքում

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Մայիլյան

Ուսումնական հաստատություն՝ Օձունի N2 միջնակարգ

դպրոց

Երևան 2022

## Բովանդակություն

Ներածություն	էջ 3
Գործնական աշխատանքի իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում	էջ 6
Գործնական աշխատանքների նշանակությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում	էջ 9
Գործնական աշխատանքների տեսակները	էջ 11
Գործնական աշխատանքների գնահատումը	էջ 13
<<Աշխարհագրության >> դասընթացներում նախատեսվող գործնական աշխատանքների նմուշներ	էջ 15
Եզրակացություն	էջ 23
Գրականության ցանկ	էջ 24

## Ներածություն

Ապագան պատկանում է նրանց ,  
ովքեր կկարողանան ինֆորմացիան  
քննադատաբար վերլուծել և  
կերտել սեփական ճշմարտությունը:

Կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման  
և դաստիարակության միասնական գործընթաց է :Այն նպատակաուղղված է  
ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը  
յուրացնելուն , հաստատելուն և սերունդներին փոխանցելուն:

Կրթության գաղափարը փոխվում է յուրաքանչյուր պատմական  
ժամանակաշրջանի , սոցիալական զարգացման ամեն մի փուլի հետ: Ամեն անգամ .  
<<Ի՞նչ է նշանակում կրթված լինել>> հարցը տարբեր իմաստ և բովանդակություն է  
ձեռք բերում:

XXI դարն առաջադրում է նոր խնդիրներ , որոնք աշխարհի շատ պետություններից  
պահանջում են վերանայել իրենց կրթական համակարգը:

Արդի կրթության առաջնահերթ խնդիրներից մեկը բարդ իրավիճակում արագ և  
հաջողությամբ հարմարվել կարողացող, ցանկացած ոչ սովորական  
պայմաններում ճիշտ որոշումներ ընդունող մարդկանց պատրաստումն է:

Այդ բարդ և պատասխանատու պարտականության իրականացման հիմնական  
դարբնոցը հանրակրթական դպրոցն է, ու ժամանակակից փուլում պետք է  
պայմաններ ապահովել սովորողի մոտ ինքնուրույնության , քննադատական  
մտածողության ու ստեղծագործական ակտիվություն մշակելու համար: Դպրոցը  
պետք է աշակերտի մեջ ձևավորի ոչ միայն գիտելիքների, կարողությունների ու  
հմտությունների կայուն հիմք, այլև առավելագույնս զարգացնի նրանց մտավոր  
ակտիվությունը՝ սովորեցնել մտածել, ինքնուրույնաբար լրացնել և թարմացնել

գիտելիքները, գիտակցաբար օգտագործել դրանք տեսական և գործնական խնդիրներ լուծելիս:

Շատ կարևոր է սովորողին ներգրավել հարցերի առաջադրմանը և դրանց պատասխաններն ակտիվորեն որոնելու գործընթացում: Նրանք պետք է վերհիշեն այն գիտելիքները, որոնք արդեն ունեն և ճշտեն, թե ինչ են ուզում իմանալ: Այս մոտեցումը հատկապես օգտակար է բնագիտական առարկաների դասավանդման ընթացքում:

Երեխաներին աշխարհի մասին իրենց տեսություններն են սահմանում դեռ մանուկ հասակում և դրանք վերանայում են ուսումնառության ժամանակ: Հմուտ մանկավարժը ուսումնառությանը վերաբերվում է որպես այնպիսի գործընթացի, որն աշակերտներին ավելի շուտ օգնում է ընդարձակել և վերակառուցել մտքերը: Այս սկզբունքը կառուցողական տեսության անկյունաքարն է, ըստ որի.

- սովորողներն ավելի շուտ կենտրոնանում են կարևոր գաղափարների, քան փաստերի վրա,
- կապեր են հաստատում գիտելիքների տարբեր մասերի միջև,
- մեկնաբանում են սեփական գործողություններն ու գաղափարները, նշում դրանց հնարավոր կիրառման ոլորտները:

Վերը նշված խնդիրների լուծմանը արդյունավետ կերպով կարող են նպաստել բնագիտական առարկաների դասերին սովորողների կողմից գործնական աշխատանքների կատարման իրականացումն ու կազմակերպումը:

### **Աշխատանքի մեջ դրված հարցերն են.**

1. Ինչպե՞ս է ներգործում գործնական աշխատանքը աշակերտների կարողությունների և հմտությունների զարգացման վրա:
2. Ինչպիսի՞ դեր են խաղում գործնական աշխատանքները դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման գործում:
3. Ի՞նչ կարևորություն ունեն գործնական աշխատանքները աշխարհագրության տեսական նյութը յուրացնելու գործում:

**Դասապրոցեսում գործնական աշխատանքի իրականացման նպատակներն են.**

- Ջարգացնել քարտեզագրական նյութերից օգտվելու որոշակի հմտություններ:
- Ձևավորել այնպիսի կարողություններ, որոնց շնորհիվ սովորողը կկարողանա ինքնուրույն կատարել իրեն առաջադրված խնդիրները:
- Ջարգացնել ստեղծագործական ունակությունները:
- Բարձրացնել ինքնավստահությունը և վերահսկողությունը սեփական անձի նկատմամբ:
- Ջարգացնել սովորողների մոտ կազմակերպչական կարողությունները և հմտությունները :
- Ձևավորել ինքնուրույն աշխատելու, համագործակցելու կարողություններ և հմտություններ :
- Նպաստել սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:
- Ջարգացնել վերլուծելու կարողություններ և հմտություններ:
- Ջարգացնել տեղեկատվության ինքնուրույն ընկալման, մտապահման և համակարգման կարողություններ:
- Նպաստել տարածական պատկերացումների ձևավորմանը:

Գործնական աշխատանքների իրականացման արդյունքում սովորողը կկարողանա .

- ❖ սեփական ուսումնասիրությունների հիման վրա կազմել համապատասխան բովանդակությամբ քարտեզներ:
- ❖ օգտվելով տեղագրական քարտեզներից կատարել չափումներ, վերլուծություններ
- ❖ լուծել աշխարհագրական տարատեսակ խնդիրներ օգտվելով թեմատիկ դիագրամներից:
- ❖ դիտարկել բնության երևույթները և գտնել պատճառահետևանքային կապերը:

## **Գործնական աշխատանքի իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում**

Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնառության բարելավումն է,ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում:Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորման,իրականացման և վերլուծության փուլերին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել:

Գործնական աշխատանքները հնարավորություն են ընձեռնում սովորողի գիտելիքները մեխանիկական վերարտադրողական աստիճանից փոխարկել արդյունավետ-կատարողական աստիճանի,այն դարձնել կայուն ,մշակել որոշակի հմտություններ,ձևավորել դրական որակներ՝ կամք,հետևողականություն,հետազոտական հետաքրքրասիրություն:

Սովորողի ինքնուրույնությունը վկայում է մտածական գործողություններին տիրապետելու՝ վերլուծելու,համադրել-հակադրելու,եզրակացություններ կատարելու կարողությունների մասին:

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է հանրապետության պետական չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կիրառելով առարկայի չափելի վերջնաարդյունքների վրա,ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը,և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի՝

1. Վերարտադրողական,որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը(օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ,գետեր,լճեր և այլն):

2. Մասամբ որոնողական- երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լուծումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրները (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլ պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա՝ ուրվագծային քարտեզ):
3. Ստեղծագործական- երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն, կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ կազմել տեղանքի քարտեզը ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլ վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պատրաստի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքների շրջանակներում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին, առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

Ինչպես նշեցինք գործնական աշխատանքները կարելի է կատարել ինչպես անհատական, այնպես էլ, խմբային աշխատանքների շրջանակներում: Խմբային գործնական աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսումնական

գործընթացը՝ նպաստելով սովորողի համագործակցային հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Խմբային գործնական աշխատանքները աշակերտների մոտ զարգացնում են կարևոր մարդկային հատկանիշներ՝ համագործակցել,լսել և հարգել դիմացինի կարծիքը ,պատասխանատվություն կրել խմբի համար:Նույնիսկ ամենաթույլ աշակերտը թեկուզ փոքր,բայց որոշակի ներդրում կունենա տրված առաջադրանքը կատարելու համար:

Խմբային գործնական աշխատանքի ժամանակ խմբում ձևավորվում է միմյանց օգնելու ,խրախուսելու,աջակցելու մթնոլորտ:Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն:Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին :

- Խմբի անդամները համագործակցում են ,փոխանակում են տեղեկություններ,կարծիքներ և ռեսուրսներ ,մշակում և վերլուծում են տեղեկությունը,ապահովում են հետադարձ կապ,քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
- Ձևավորվում է սոցիալական հմտություններ. խմբի անդամների միջև վարքագծային նորմեր՝ անադմուկ աշխատանք,ներկայություն մինչև աշխատանքի ավարտը,խոսողին հետևելը ,առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:



**Գործնական աշխատանքների նշանակությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում:**

Գործնական աշխատանքներն աշխարհագրության ուսուցման անբաժան մասն են : Այդ աշխատանքների կատարումը հնարավորություն է տալիս սովորողներին ստացած տեսական գիտելիքները կիրառելու գործնականում,ինչպես նաև օժտում է կենսականորեն անհրաժեշտ այնպիսի կարողություններով,ինչպիսիք են քարտեզը կարդալը,քարտեզների համադրումը քարտեզների ու վիճակագրական նյութերի վերլուծությունը և այլն:Գործնական աշխատանքները նպաստում են դպրոցականների աշխատասիրության ձևավորմանը ,զարգացնում նրանց ինքնուրույնությունը:

Որպես դպրոցական առարկա՝ <<Աշխարհագրության>> առանձնահատկությունն այն է ,որ գիտելիքների յուրացման համար անհրաժեշտ է տեղեկատվության տարբեր աղբյուրներից (տեքստային,քարտեզագրական,վիճակագրական և այլն ) օգտվելու կարողություններ ունենալ:Այդ կարողությունների ձեռքբերում հնարավոր է հատկապես գործնական աշխատանքների կատարման ընթացքում:

Գործնական աշխատանքների կատարումը պարտադիր է:Ավելին՝ յուրաքանչյուր կիսամյակում պարտադիր են դարձել գործնական աշխատանքների համար աշակերտների գնահատումները և դասամատյանում դրանց համար հատուկ տեղ է առանձնացված:

Աշխարհագրության դասընթացում գործնական աշխատանքները բազմազան են իրենց բովանդակությամբ,կատարման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրներով ,դպրոցականների կողմից դրսևորվող ինքնուրույնության մակարդակով ,արդյունքների արձանագրման ձևերով և այլն:Այդ բազմազանությունն առաջին հերթին պայմանավորված է ուսուցանվող նյութի բովանդակության աշխարհագրական տեղեկատվության աղբյուրների առանձնահատկություններով,դպրոցականների պատրաստվածության աստիճաններով:

Որպեսզի աշակերտները գործնական աշխատանքները կատարեն գիտակցաբար, ոչ թե որպես սոսկ նմանակում, ցանկալի է դրանք անցկացնել մեթոդական հետևյալ պահանջներին համապատասխան.

- Դպրոցականներին ծանոթացնել յուրաքանչյուր գործնական աշխատանքների նպատակներին,
- Օգտագործել հրահանգչական քարտ-թերթիկներից՝ տարբերակված ուսուցման սկզբունքները հաջողությամբ իրագործելու համար,
- Դասարանում ձևավորել ստեղծագործական համագործակցության մթնոլորտ, չկաշկանդել սովորողների նախաձեռնողականությունը, նրանց հնարավորություն տալ ընտրելու նախանշված նպատակին հասնելու ուղիներ.
- Կիրառել խաղային տարրեր, ավելի հաճախ ձևակերպել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, աշխատանքների արդյունքների արձանագրման ինքնատիպ միջոցներ (աշակերտների ցանկությամբ):
- Աշակերտներին հաղորդել աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրները, հարկ եղած դեպքում նրանց տրամադրել լրացուցիչ նյութեր:

Պլանավորելով յուրաքանչյուր գործնական աշխատանք՝ կարևոր է հշվարկել կատարման համար անհրաժեշտ ժամանակը:

Գործնական աշխատանքների կատարումից հետո ցանկալի է դասարանում քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան պարզելու նաև առաջադրված խնդիրների ոչ ավանդական, ստեղծագործական և ինքնատիպ լուծումները:

## Գործնական աշխատանքների տեսակները

Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն գործնական աշխատանքները ,որոնք կատարվում են դասարանում , տեղանքում,արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Գործնական աշխատանքները աշակերտի ուսուցման կազմակերպան ձև են:Ուսուցողական գործնական աշխատանքները կատարվում են ուսուցչի ղեկավարությամբ:Ուսուցիչը բացատրում է գործողությունների հերթականությունը ,ցույց է տալիս կատարման օրինակը և հանձնարարում առաջադրանքը,որը ենթադրում է գործողության վերարտադրում ու մտապահումը,այսինքն ուղղված է գործողության եղանակի յուրացմանն ու կարողության ձևավորմանը (օր.՝ <<կետի աշխարհագրական կոորդինատների >> որոշումը :Գտնել Ամստերդամի,Տորոնտոյի,Մելբուրնի աշխարհագրական լայնությունները,գտնել Մադրիդի,Մագադանի,Լա Պասի աշխարհագրական երկայնությունները ,որից հետո ,գտնել Քեյփթաունի ,Օսլոյի ,Կերգելեն կղզիների աշխարհագրական կոորդինատները):Վարժեցնող գործնական աշխատանքները ուղղված են կարողության ամրապնդմանն ու կատարելագործմանը,ինչը կհանգեցնի հմտության ձևավորմանը ,այսինքն գործողության ավտոմատացմանը(օր.՝ ինքնուրույն ընտրել Աֆրիկա մայրցամաքի երեք տեղանուն և որոշել դրանց աշխարհագրական կոորդինատները,որից հետո կրկնել առաջադրանքը մյուս մայրցամաքների հետ):Այսինքն ուսուցիչն առաջադրում է կետի աշխարհագրական կոորդինատների որոշմանն ուղղված տարատեսակ աշխատանքներ,որոնք պահանջում են յուրացված կարողության բազմակի կրկնություն և հանգեցնում հմտության ձևավորման:Ամփոփիչ գործնական աշխատանքները ուղղված են կարողությունների և հմտությունների յուրացման որակի ստուգմանն ու դրանց կիրառմանը նոր պայմաններում (օր.՝ նավը գտնվում է հվ.լ. 40° և արմ. ե. 15° կետում և օգնություն է խնդրում,մոտակա երկու նավերը գտնվում են՝ 1-ին-ը հվ.լ. 20° և արմ. ե. 5° , իսկ երկրորդը հվ.լ. 40° -ում և արմ. ե. 90° -ում,հարց ո՞ր նավը ավելի շուտ կհասնի օգնության : Աշակերտի

գործողությունը ,արտահայտել կիլոմետրով կամ ծովային մղոնով և պատասխանել հարցին ):

Գործնական մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում ,երբ սովորողները տիրապետում են ուսումնական աշխատանքի այնպիսի հնարներին,որոնք ընկած են աշխարհագրական կարողությունների և հմտությունների հիմքում:Գիտելքի աղբյուրներից տեղեկություն կորզելու համար , պետք է հասկանալ նրանում պարունակվող աշխարհագրական տեղեկության առանձնահատկությունները:Օրինակ ,քրտեզով աշխատել կարողանալու համար,պետք է սկզբում կարողանալ այն բնութագրել(անվանումը,բովանդակությունը,ընդգրկված տարածքը,մասշտաբը,պայմանանշանները,որից հետո նոր աշակերտները կկարողանան կորզել տեղեկություններ):Այսպիսով քարտեզը սկզբից հանդիսանում է ուսումնասիրման առարկա ,հետո նոր գիտելիքների ստացման աղբյուր:Մեթոդիկայի այս <<Ոսկե օրենքը >> կիրառվում է ամեն անգամ ,երբ աշակերտը հանդիպում է գիտելիքների ձեռք բերման նոր աղբյուրի:Աշխարհագրության ուսուցման ընթացքում գործնական մեթոդները կիրառվում են դիտազննական և խոսքային մեթոդներին զուգահեռ:

## Գործնական աշխատանքների գնահատումը

Բոլոր գործնական աշխատանքները պարտադիր պետք է գնահատվեն: Ընդ որում՝ աշակերտների աշխատանքների գնահատումը կարելի է կատարել ն՝ միաժամանակ՝ ստուգելով բոլորի աշխատանքը, ն՝ աստիճանաբար՝ ըստ դրանց պատրաստվածության աստիճանի:

Բոլոր դեպքերում կարևոր է, որ աշխատանքների արդյունքները գնահատվեն օբյեկտիվորեն: Դրա համար ներկայացնենք գնահատման չափանիշները.

- 1 է գնահատվում- Սովորողը աշխատանքը չի կատարել
- 2 է գնահատվում-Սովորողը փորձ է արել կատարելու աշխատանքը, սակայն ստացված արդյունքը չի համապատասխանում աշխատանքի բովանդակությանը
- 3 է գնահատվում-Սովորողը հանձնարարության ուղղությամբ կատարել է որոշ աշխատանք, սակայն պատկերացում չունի հարցի աշխարհագրական բովանդակության վերաբերյալ, ինչի հետևանքով ստացվել են սխալ արդյունքներ:
- 4 է գնահատվում –Սովորողը կատարված աշխատանքի վերաբերյալ ունի մակերեսային պատկերացում, կատարել է 1-2 ճիշտ գործողություն և ստացել առնվազն մեկ դրական արդյունք:
- 5 է գնահատվում- Սովորողը աշխատանքը պատկերացնում է ընդհանուր գծերով, կատարում է առանձին պարզ գործողություններ (հաշվարկներ, կոնկրետ օբյեկտների դիտում, չափում, տրվագծային քարտեզների գունավորում և այլն):
- 6 է գնահատվում-Սովորողը ապահովում է գործնական աշխատանքի կատարման միայն մեխանիկական կողմը, չի պահպանում աշխատանքի կատարման տրամաբանական հաջորդականությունը, ուսուցչի օգնությամբ կատարում է ստացված արդյունքների պարզ նկարագրություն:
- 7 է գնահատվում-Սովորողը աշխատանքի կատարման մեխանիկական կողմի ճիշտ հաջորդականությունն ապահովելու հետ մեկտեղ

նկարագրում,բացահայտում է աշխատանքի կատարման ընթացքը ,բայց մասնակիորեն է պատկերացնում ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները ուսումնական և այլ իրավիճակներում:

- 8 է գնահատվում-Մովորողը կարողանում է ապահովել համձնարարության կատարման հիմնական պահանջները ,պահպանում է աշխատանքի կատարման տրամաբանական հաջորդականությունը ,ստանում է պահանջվող բոլոր արդյունքները ,որոնց հիմնան վրա կատարում է փաստարկում և մասնակի վերլուծություն :Ստացված արդյունքները կարողանում է կիրառել միայն ուսումնաան իրավիճակում:
- 9 է գնահատվում – Մովորողը կարողանում է ապահովել աշխատանքի լիարժեք կատարումը ,տիրապետում է դրա համար անհրաժեշտ բոլոր գործնական հմտություններին,ստացված արդյունքների հիման վրա կարողանում է կատարել համապարփակ վերլուծություն,այդ արդյունքները կարողանում է կիրառել ուսումնական և համարժեք(անձանոթ ) իրավիճակներում:Կարողանում է ճշգրիտ կապեր ստեղծել իր կատարած այլ գործնական աշխատանքների միջև:
- 10 է գնահատվում-Մովորողը կարողանում է ճիշտ մոդելավորել ստացված արդյունքները ,դրանց հիման վրա կատարել աշխարհագրական կանխատեսումներ,տալ գնահատականներ(արժևորել) :Ստացված արդյունքները կարողանում է կիրառել ցանկացած իրավիճակում : Կարողանում է մոդելավորել աշխարհագրական բովանդակությամբ թեմատիկ գործնական աշխատանքները:

**<<Աշխարհագրության >> դասընթացներում նախատեսվող գործնական  
աշխատանքների նմուշներ**

Գործնական աշխատանքները աշխարհագրության ուսուցիչը պետք է կիրառի հիմնականում կարևոր և բարդ թեմաներն անցնելուց հետո՝ ստուգելու համար ,թե որքանով է այն յուրացվել և ինչպես են աշակերտները տեսական գիտելիքները կիրառում գործնականում:Գործնական աշխատանքների ժամանակ աշակերտները հիմնականում աշխատում են ինքնուրույն,ինչն էլ նպաստում է նրանց գիտելիքների ,կարողությունների ու ունակությունների խտացմանը:

**5-րդ դասարանի <<Բնագիտություն>>** առարկայի աշխարհագրության բաժնի թեմաներից գործնական աշխատանքը կարող է վերաբերել <<Երկրի պատկերումը քարտեզի վրա>>,<<Մթնոլորտ>>,<<Երկրակեղև>>,<<Ջրոլորտ>>,<<Երկրի պտույտը և դրա հետևանքները>>:

Օրինակ <<Մթնոլորտ>> թեմայի ուսումնասիրության ժամանակ գործնական աշխատանքները հիմնականում տրվում են խնդիրների,զծապատկերների ձևով:Թեմայի վերջում սովորողներին հանձնարարվում է կազմել<< եղանակի օրացույց>>մեկ շաբաթվա կտրվածքով,որի ընթացքում սովորողները օրը 3 անգամ դիտարկում են օրվա ջերմաստիճանը,ամպամածությունը,ամպերի տեսակները ,տեղումների տեսակները ,որոշում են օրական միջին ջերմաստիճանը ,ինչպես նաև դիտարկում են քամու ուղղությունը և բնական այլ երևույթներ:

Այս գործնական աշխատանքի շնորհիվ աշակերտը իր ստացած տեսական գիտելիքները կարողանում է կիրառել գործնականում ,որն էլ ավելի է նպաստում գիտելիքների ավելի խորը յուրացնելուն,կարողանում է հասկանալ աշխարհագրական թաղանթի բաղադրիչների միջև գոյություն ունեցող կապերը:

Գործնական աշխատանքների թեմատիկան բավականին ընդարձակ է:Այն ընդգրկում է մայրցամաք,ուսումնասիրող բոլոր թեմաները՝ ռելեֆը,ներքին ջրերը,կլիմայական գոտիները ,բնական զոնաները,ենթացամաքները

,պետությունները և այլն:Այդ դասընթացներում գործնական աշխատանքները հիմնականում իրականացվում է ուրվագծային քարտեզի միջոցով:

Ուրվագծային քարտեզի հետ աշխատելիս սովորողի մեջ զարգանում է տեղեկատվության ինքնուրույն ընկալումն ու մտապահումը,միաժամանակ դրսևորում է նրա ստեղծագործական մոտեցումը թեմային:Աստիճանացանցի ,քարտեզում ներկայացված օբյեկտների եզրագծերի համադրումը նպաստում են տարածական պատկերացումների ձևավորմանը,օբյեկտների փոխադարձ և օրինաչափ կապերի բացահայտմանն ու ընկալմանը:

**6-րդ դասարանում**-կարելի է նաև կատարել հետևյալ գործնական աշխատանքը:

**1.Կազմակերպչական մաս**- դասի սկզբից ուսուցիչը աշակերտների առջև դնում է որոշակի խնդիր ,օրինակ օգտվելով Հյուսիսային Ամերիկայի ֆիզիկական քարտեզից և այլ նյութերից կազմել ԱՄՆ-ի և Կանադայի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը:Դասարանը կարող է բաժանվել խմբերի՝ հանձնարարելով մեկական երկիր:

**2.Ուսումնական պլանի կազմում**-աշակերտները ուսուցչի մասնակցությամբ կազմում են հանձնարարված երկրի ֆիզիկաաշխարհագրական նկարագրության պլանը:Եթե այդ հանձնարարությունը առաջին անգամ է ,ապա ուսուցիչը պարտավոր է գրատախտակի վրա գրել պլանը և որոշ հարցերի վերաբերյալ տալ մանրամասն բացատրություն:Օրինակ՝ ԱՄՆ-ի ֆիզիկաաշխարհագրական նկարագրության համար կարող է կազմել հետևյալ պլանը.

- Աշխարհագրական դիրքը
- Մակերևույթի բնույթը և օգտակար հանածոները
- Կլիման
- Կլիմայի տիպերը ,կլիմայի գոտիները
- Գետերը , լճերը
- Հողերը,կենդանական և բուսական աշխարհը ,բնական զոնա
- Բնության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա:

Աշակերտները պլանի այս կետը արտագրում և անցնում են շարադրանքի:Դասի կահավորման համար դասարան են բերվում տարբեր բնույթի



քարտեզներ:Ուսուցիչը պետք է թույլ տա աշակերտին օգտվելու քարտեզից,նաև տվյալներ վերցնելու դասագրքի համապատասխան նյութից:

Դասի այս մասին հատկացվում է 25-30 րոպե:Աշխատանքը ավարտելուց հետո ուսուցիչը հանձնարարում է աշակերտներից որևէ մեկին բարձրաձայն կարդալ իր շարադրանքը,իսկ մյուսներից պահանջում է ,որ հետևեն և լրացնեն բացթողումները:Ուսուցիչը կատարած բոլոր աշխատանքները հավաքում ,ստուգում և գնահատում է:

**7-րդ դասարանի-** աշխարհագրության ծրագրում\_<<բնական ռեսուրսներ>> թեմայի շրջանակներում ,նախատեսված է <<բնական ռեսուրսների բաշխվածությունը >> թման ,որի ընթացքում սովորողը սովորողները պետք է ծանոթանան մի շարք բնական ռեսուրսների տարածմանը ` ըստ տարածաշրջանի և առանձին երկրների:Սովորողները ծանոթանում են փաստական տվյալների ու աղյուսակների հետ:Այդ տվյալներն ավելի լավ յուրացնելու համար օգտագործվում է ուրվագծային քարտեզ ,որի վրա սովորողներն իրենց անահատական ուսումնական գործիքներով կատարում են տարբեր նշումներ `առանձնացնելով այս կամ այն ռեսուրսներով հարուստ երկրներն ու տարածաշրջանները :

Վերջում պայմանական նշանների և քարտեզների միջոցով արտահայտում են նաև որոշաի ինֆորմացիա :Քարտեզների վրա պայմանական նշաններ ստեղծելիս սովորողներն ազատ են իրենց գործունեության մեջ,այսինքն կարող են օգտագործել ինչպես արդեն կիրառվող պայմանական նշաններ,այնպես էլ ստեղծել նորեր:

Շատ հաճախ քարտեզների վրա ինֆորմացիա արտահայտելու համար օգտագործվում է նաև գունային ֆոն ,այսինքն սովորողները ստեղծում են նաև քարտեզագրամներ:Սովորողների կողմից պայմանական նշանների և քարտեզագրամների ստեղծում հնարավորություն է տալիս ընկալելու դրանց ստեղծման սկզբունքները ,ինչն իր հերթին դյուրացնում է այլ քարտեզներում պայմանական նշանների ու քարտեզագրամների ըթերցումն ու ինֆորմացիայի ընկալումը:

7-րդ դասարանի դասընթացում նաև սովորողները գործնական աշխատանքի դաս անց են կացնում խնդիրների լուծման տարբերակով ,սովորում և կարողանում են տարբեր դիագրամների միջոցով կատարել վերլուծություններ: **8-րդ դասարանում** գործնական աշխատանքները հիմնականում իրականացվում են ուրվագծային քարտեզի միջոցով : ,որտեղ աշակերտները տարբեր տարբեր գունային ֆոնի եղանակով նշում են պետությունները ,մայրաքաղաքները ,տնտեսական շրջանները,արդյունաբերական կենտրոնները ,նշանավոր օգտակար հանածոները:Այս աշխատանքի արդյունքում սովորողները ամրապնդում են տեսական գիտելիքները, զարգացնում են քարտեզով աշխատելու ,քարտեզներ ընթերցելու հմտությունները:

Այս դասընթացում կիրառվում է նաև համակարգչային տեխնոլոգիաներ,որի շնորհիվ դասը դառնում է ավելի պատկերավոր ,զարգանում է տեսողական հիշողությունը:

SZS-րի միջոցով տեսական գիտելիքներն ամրապնդվում է թեմային առնչվող տեսադասերով, գործնական աշխատանքներով:Այդ նպատակով ուսուցիչները օգտվում են <http://esouree.armedu.am> կայքից ,ինչպես նաև սովորողն ինքն է ստեղծում տեսադասեր , սահիկներ:

<<Հայաստանի աշխարհագրություն>> դասընթացի գործնական դասերը առավել նպատակահարմար է կիրառել դաշտային աշխատանքների միջոցով:

Դաշտային աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է նախապես ծրագիր կազմել ,որտեղ պետք է հստակ ներկայացվեն.

- Այցի թեման
- Նպատակը,խնդիրները
- Տնտեսաաշխարհագրական օբյեկտը,գտնվելու վայրը,այցելության ժամանակը
- Հետազոտական աշխատանքները
- Տվյալ թեմայի վերաբերյալ դասարանային ուսումնասիրությունները
- Աշակերտներին տրվելիք հստակ հրահանգները

- Ծանոթացում այցելության օրյեկտում վարքի կանոնների պահպանման մասին:

Այցի ընթացքը.

- Եթե խումբը մեծ է ,կարելի է բաժանել մի քանի մասի:
- Դիտարկումների ժամանակ աշակերտները պետք է կատարեն գրառումներ այն մասին,թե

1)Ինչ խնդիրներ լուծեու համար են այց կատարել

2)Ինչ սովորեցին այցը կտարելուց հետո:

Դաշտային աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու համար

դասարանը կարելի է բաժանել 4 խմբի՝ <<երկրաբաններ>> ,

<<կլիմայագետներ>> , <<ջրաբաններ >> և

<<լանդշաֆտագետներ>>,որոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում է

կատարել համապատասխան <<մասնագիտական>> հետազոտական

առաջադրանքը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով չափիչ սարքերից և

գործիքներից:

Առաջադրանք <<երկրաբաններ>>

1. Որո՞նք են ձեր տարածքի մակերևույթի խոշոր ձևերը (լեռներ , գոգավորություններ ,լեռնահովիտներ):

Ի՞նչ կառուցվածք ունեն դրանք:Նկարագրել դրանց տնտեսական օգտագործման առանձնահատկությունները:

2. Ի՞նչ լեռնային ապարներ են տարածված մակերևույթի տարբեր մասերում:Դասարանով ստեղծել <<Իմ բնակավայրի քարաշխարհը>> խորագրով լեռնային ապարների ,օգտակար հանածոների հավաքածու:Անհրաժեշտ է հավաքել բնակավայրի շրջակա տարածքում տարածված լեռնային ապարների նմուշներ:

Առաջադրանք <<կլիմայագետներին>>

1. Բնութագրել բնակավայրի կլիման՝ օգտագործելով բնակավայրի,կամ մոտակա օթերևութաբանական կայանի հետևյալ տվյալները,իսկ դրա

բացակայության դեպքում աշակերտին տրամադրել անհրաժեշտ տվյալները:

ա)մթնոլորտային ճնշումը,տիրապետող քամիների ուղղությունը

բ)օդի միջին ջերմաստիճանի տարեկան ընթացքը

գ)ամենատաք ու ամենացուրտ ամիսների միջին,նվազագույն և առավելագույն ջերմաստիճանները:

դ)մթնոլորտային տեղումների քանակն ու բաշխվածությունն ըստ ամիսների:

2. Ըստ կլիմայական սեզոնի գնահատել ջերմաստիճանի և

մթնոլորտային տեղումների ազդեցությունը բնակչության կենցաղի և արտադրական գործունեության վրա:

Առաջադրանք <<ջրաբաններին>>

1. Ո՞ր գետի մոտ է գտնվում բնակավայրը:Գետի որևէ հատվածում չափել գետի լայնությունը,միջին խորությունը ,հոսքի արագությունը:Ստացված տվյալներով որոշել գոտի ծախսը ,օրական հոսքը:

Այս առաջադրանքը կատարելու համար պետք է ձեռքի տակ ունենալ առնվազն 10մ երկարության մետաղական քանոն,վայրկյանաչափ,լոդան,սանտիմետրական բաժանումով պարան՝ ծայրին ծանրոց ամրացված:

Առաջադրանք <<լանդշաֆտաբաններին>>

1.Լրացնելով ստորև բերված աղյուսակը՝ կազմել բնակավայրի հարակից <<Լանդշաֆտային գոտիների բութագիրը>> :

վերընթաց լանդշաֆտային գոտիներ	բացարձակ բարձրություն (մ)	կլիման	հողերը	բուսականությունը	կենդանական աշխարհը

Հետազոտությունից հետո հանձնարարել աշակերտներին կազմել հաշվետվություն կատարած դիտարկումների արդյունքների մասին:

**Ավագ դասարանների** դասագրքերը հազեցած են գործնական աշխատանքներով, որոնք լրացնելով տեքստային նյութը ավելի ամբողջական, հետաքրքիր ու մատչելի են դարձնում թեմաները: Ավագ դպրոցն ավարտելով սովորողը ստացած աշխարհագրական գիտելիքների շնորհիվ կկարողանա քարտեզագրել, մոդելավորել, փորձնական ճանապարհով ստուգել ստացված արդյունքները, դրանք համակարգել, տիրապետել ճանաչողության ու վերլուծության ընդհանուր մեթոդներին, տեսնել շրջապատում եղած իրերի ու երևույթների փոխադարձ կապը, կիրառել բնագիտական օրենքների և տեսությունների իմացությունը բնության երևույթները բացատրելու համար, դրսևորել ընդհանուր էկոլոգիական գրագիտության և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք:

Ստորև ներկայացնենք 10-րդ դասարանում իրականացվող գործնական աշխատանքներից մեկ օրինակ.

Գործնական աշխատանքի թեման-<<Երկրակեղևային սալերը և դրանց տեղաշարժման ուղղությունները>>:

Աշխատանքի նպատակը

- Ամրապնդել երկրակեղևային սալերի տեսության վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները:
- Սովորել <<Երկրակեղևի կառուցվածքը>>, քարտեզն ընթերցել և դրանով կանխատեսել մայրցամաքների և օվկիանոսների ափագծերի փոփոխությունները հեռու ապագայում:

Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Ատլասի՝ <<Երկրակեղևի կառուցվածքը>> քարտեզի վրա գտնել խոշոր երկրակեղևային սալերը:

2. Ուրվագծային քարտեզի վրա նշել խոշոր սալերը, ցույց տալ դրանց շարժման ուղղությունն ու արագությունը:

3. <<Երկրակեղևի սալեր >> տեսությունը թույլ է տալիս նայելու դեպի երկրի հեռավոր ապագան:

Այդ տեսության հիման վրա ներկայացնել երկրի մակերևույթի ապագայի մոդելը.ինչպե՞ս տեղաբաշխված կլինեն մայրցամաքներն ու օվկիանոսները միլիոնավոր տարիներ հետո:

## Եզրակացություն

Գործնական աշխատանքը աշակերտի ինքնուրույն գործունեության տեսակ է ,որը հնարավորություն է տալիս զարգացնել ինքնուրույն ճանաչողական մտածողությունը:

Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է ,այլև դրանք գործնականում կիրառել կարողանալը:Աշակերտը պետք է կարողանա կատարել իրեն տրված առաջադրանքը,դնի կոնկրետ նպատակ,գտնի դրանք լուծելու ճանապարհ ,պլանավորի իր անելիքը ,ստանա արդյունք և կատարի եզրահանգում:

Գործնական աշխատանքի ժամանակ աշակերտը պետք է ընտրության հնարավորություն ունենա ,կարողանա ինքնուրույն առաջադրանքներ կատարել , որը խթանում է աշակերտի ստեղծագործական մտածողությունը ,հմտությունը , երևակայությունը ,իմացական հետաքրքրությունը:

Գործնական աշխատանքների իրականացման արդյունքում աշակերտը կկարողանա սեփական ուսումնասիրության հիման վրա կազմել համապատասխան բովանդակությամբ քարտեզներ օգտվելով տեղագրական քարտեզներից՝կատարել չափումներ,վերլուծություններ և այլ հետազոտություններ:

Դպրոցական աշխարհագրության բովանդակության արդիականացման պայմաններում գործնական մեթոդների դերն ավելանում է ,դրանք նպաստում են տեսության և գործնական կապի ամրապնդմանը ,նպաստում են հայրենագիտական գիտելիքների արդյունավետ ձեռքբերմանը և նախապատրաստում սովորողներին ինքնուրույն կյանքին:

## Գրականության ցանկ

- 1) [https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post\\_80.html](https://kznakgnahatum.blogspot.com/2021/08/blog-post_80.html)
- 2) <<Սովորողների ինքնուրույն-գործնական աշխատանքներ>> -  
Արեքնազ Սահակյան
- 3) <<Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները>> -  
Մ.Մինասյան
- 4) <<Աշխարհագրության ուսուցիչների ձեռնարկ 10 – 12  
դասարանների>> - Ա.Հովեփյան, Գ.Հովհաննիսյան, Խ.Սարգսյան
- 5) <<Հայաստանի աշխարհագրության ուսուցչի ձեռնարկ>> -  
Մ.Մանասյան , Ա.Հովեփյան